

Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագրի շուրջ (1268 թ.)

Ա. Է. Յովհաննիսյան

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ամենակարևոր հարցերից է արտաքին քաղաքականությունը և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը: Թեև այն բավականին կարևոր է, այնուամենայնիվ մինչև օրս որևէ գիտնական ըստ արժանվույն չի ուսումնասիրել: Հայտնի է, որ 13-րդ դարի երկրորդ կեսերին մերձավոր արևելքում միջազգային իրավիճակը փոփոխվել էր: Մի կողմից թուլացել էին Իկոնիայի սելջուկները և Բյուզանդական կայսրությունը, մյուս կողմից հոգեվարքի մեջ էին խաչակրաց արշավանքները: Բացի այդ, օր օրի թուլանում էին նաև Արևելքում հաստատված խաչակրաց իշխանությունները, որոնց մի մասի հետ Կիլիկյան Հայաստանն ուներ բարիդրացիական հարաբերություններ: Դրանց փոխարեն նշյալ ժամանակաշրջանում Արևելքում մնացին հիմնականում երկու հզոր ուժեր: Առաջինը մոնղոլներն էին, որոնք դեռևս 13-րդ դարի առաջին քառորդում, սկսելով իրենց արշավանքները, գրավեցին հսկայածավալ տարածքներ և մոտեցան Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններին: Հայոց թագավորությանը ոչինչ չէր մնում անել, քան զինական համագործակցության մեջ մտնել նրանց հետ և դրանով փրկել երկիրը: Երկրորդ ուժը Եգիպտոսի սուլթանությունն էր, որոնք պետության հիմնադրումից (1250 թ) կարճ ժամանակ անց դարձան ինչպես մոնղոլների և ֆրանկների, այնպես էլ հայերի թշնամիները: Պետք է նաև նշել, որ թեև հայ-մամլուքյան հարաբերությունների պատմությունը որոշակի ուսումնասիրել են մասնագետները, սակայն մինչև այժմ պատշաճ ուշադրության չի արժանացել 1268թ. Անտիոք քաղաքում կնքված հայ-մամլուքյան հաշտության պայմանագիրը և նրա բովանդակային դրույթները¹:

1266 թ. Եգիպտոսի սուլթանության զորքերն ավերիչ արշավանք ձեռնարկեցին Կիլիկիայի հայկական թագավորության դեմ՝ ավերելով երկրի քաղաքներն ու գյուղերը²: Բացի այդ, Մառիի լեռնանցքում տեղի ունեցած վճռորոշ

¹ Ա.Յովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության հետ 1250-1375թթ., Երևան, 2008, M. Canard, Le royaume d'Arménie-Cilicie et les mamelouks jusku au traite de 1285, Revue des Etudes Armeniennes, T. IV, Paris, 1967, P.Holt, The Mamluke Diplomacy 1260-1290, Treaties of Baybars, Qalavun with Christian Rulers, Brill, 1995, օգտվել ենք <http://books.google.am>. սայթից. (Վերցված է 05.04.2010 թ.), A.Stewart, The Armenian Kingdom and the Mamluks, War and Diplomacy During the Reignse of Hetum II, 1289-1307, Brill, 2001 :

² Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն թաթարաց, Յերուսաղէմ, 1974, էջ 53-54, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Կազմեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 272, Յովհաննես Դարդել, Ժամանակագրութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1891, Հաւաքումն պատմութեան վարդանայ

ճակատամարտում հայկական զորքը պարտություն կրեց: Սպանվեց արքայի որդի Թորոսը, իսկ մյուս որդին՝ շատերի հետ գերի տարվեց Եգիպտոս: Երկու տարի անց, մամլուքյան զորքերը, գրավելով Անտիոք քաղաքը, հաշտության պայմանագիր կնքեցին հայկական թագավորության հետ, որն էլ ընկած է մեր քննություն հիմքում: Կարևոր ենք, որ հայ-մամլուքյան պատերազմի և հաշտության բանակցությունների մասին խոսում են ոչ միայն հայ, այլ նաև արևելյան պատմիչները: Այսպես. Մառիի պատերազմի մասին տեղեկություններ են տալիս նշանավոր պատմիչներ Վարդան Արևելցու³, Յեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները⁴, Ժգ դարի հիշատակարանները⁵, Աբուլ Ֆարաջը⁶, սակայն վերջիններս բավարարվում են միայն նշել ռազմական գործողությունները և կոտորածները՝ ոչինչ չասելով հայ-մամլուքյան հաշտության պայմանագրի մասին: Նշյալ պայմանագրի մասին սահմանափակ տեղեկություններ ենք հանդիպում Գրիգոր Ակներցու⁷, Սմբատ Սպարապետի⁸ և Սամվել Անեցու⁹ աշխատություններում: Եթե Սամվել Անեցին խոսում է միայն Լևոն արքայորդու վերադարձի մասին, ապա Սմբատ Սպարապետը և Գրիգոր Ակներցին մեզ տեղեկացնում են, որ պայմանագիրը կնքվել է այն պայմանով, որ սուլթանի մոտ ընկերոջը¹⁰ հայոց արքան մոնղոլական գերությունից հետ ուղարկեց Եգիպտոս, իսկ սուլթանն էլ դրա դիմաց ազատեց Լևոն արքայորդուն և մյուս գերիներին. « Եւ իբրեւ դարձաւ սուլտանն յԱնտիոք առ ի գնալ յԵգիպտոս՝ առաքեաց առ թագաւորն հեթում յղել պանդանտ որդւոյ իւրոյ Լեւոնի, զի արձակեսցէ զնա, և յորժամ տեսցէ զորդին իւր՝ ապա առաքեսցէ առ նա զընկերակիցն իւր Սնդուրաշխարհ. և թագաւորն արար վաղվաղակի: Եւ առաքեցին պաղանտ զՕշին

վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 163, Bar Habraeus, The Chronography, London, 1932, p. 446, Յեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 51, Bibliotheque des Croisades, T.4, Paris, 1829, 504-507, Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 246, Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 150, 221-222, Makrizi, Histoire des sultans mamelouks, T. I, Part II, p. 34-40, Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Ա, Երևան, 195, էջ 97, Ղ.Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 474, Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860, էջ 68 : Այդ մասին տես նաև Կ.Մուքաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 434, Գ.Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 344-347, Ա. Семенова, Салах ад-дин и мамлюки в Егунте, Москва, 1966, էջ 181-182, см. 172-174, С. Mutafian, The Brilliant Diplomacy of Cilician Armenia, Armenian Cilicia, Edited by R. Hovhannisian and S. Payaslian, California, 2008, p. 107.

³ Վարդան վարդապետ, էջ 163-164:

⁴ Յեթում Ախտուց Տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1963, 4, էջ 190:

⁵ Ա.Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ժգ դարի, Երևան, 1986, էջ 130:

⁶ Bar Habraeus, էջ 446-447:

⁷ Գրիգոր Ակներցի, էջ 53-54:

⁸ Սմբատ Սպարապետ, էջ 220-251:

⁹ Սամվել Անեցի, էջ 150, 220-221:

¹⁰ Սոնկուր ալ-Աշկարին սուլթան Բեյբարսի մոտ ընկերն էր, որն տարիներ առաջ փրկել էր նրա կյանքը: Դառնալով Եգիպտոսի սուլթան՝ Բեյբարսը մի քանի անգամ դիմել էր մոնղոլներին՝ խնդրելով, որպեսզի իր ընկերոջը ազատեն գերությունից, սակայն մերժվել էր: Այժմ եկել էր հարմար պահը, քանի որ հայերը մոնղոլների դաշնակիցներն էին:

քեռորդի արքային Յեթնոյ, և զորդի եղբօր նորա Յեթնոյ զԸռենունդ, և զորդի Կոստանդեայ թագաւորաւորն զՎասակ տէր ճանճոյն: Եւ յորժամ հասին առ սուլտանն, պարոնն Յայոց Լեոն ազատեալ եկն յաշխարհն Կիլիկիոյ բազում ընծայիւք... և ապա առեալ զՍնդուրաշխարհն ` Լեոն իշխանն որդի Սմբատայ սպարապետի և տարաւ առ սուլտանն... »: Ինչպես նկատում ենք, հեղինակների տրամադրած վկայությունները շատ սուղ են և չեն կարող եական դերակատարում ունենալ պայմանագրի բացահայտման համար: Կարծում ենք, որ պատմիչները փորձել են պարզապես ներկայացնել պայմանագրի հիմնական մասը՝ կարևորություն չտալով մյուս դրույթներին: Կամ էլ՝ հայոց արքայազնի վերադարձը այնքան մեծ իրադարձություն է եղել երկրում, որ հեղինակները մյուս դրույթների մասին պարզապես չեն իմացել: Քննարկվող խնդրի շուրջ մի փոքր ավելի տեղեկություններ ենք հանդիպում Յեթում պատմիչի¹¹ և մանր ժամանակագիրներից մեկի աշխատության մեջ,¹² որտեղ հեղինակները նշում են, որ Յեթում արքան վերադարձրեց սուլթանի ընկերոջը՝ Սոնկուր ալ-Աշկարին և զիջեց Դարպասակի ամրոցը, ինչպես նաև 2 այլ բերդեր. « Եւ այսպէս սուլթանն դարձոյձ զարքայորդին, և ընկալաւ զմտերիմն իւր. և թագաւորն հայոց դարձոյձ սուլթանին զամուրն Դարպասակ, և զայլ երկու ամրոցս ետ քակեալ ըստ խնդրոյ սուլթանին»: Թե որոնք էին այդ երկու ամրոցները, դժբախտաբար պատմիչները չեն անդրադառնում՝ հետազոտողներին թողնելով անլուծելի իրավիճակում: Ինչպես նկատում ենք, հայկական աղբյուրների վկայությունները բավականին աղքատիկ են նշյալ խնդրի պարզաբանման համար: Յիշյալ թեմայի մասին տեղեկություններ ենք հանդիպում նաև արևելյան, մասնավորապես՝ արաբական աղբյուրներում: Ընդ որում, քննարկվելիք հարցի շուրջ փաստեր կան Աբուլ Ֆիդայի ժամանակագրության մեջ, որտեղ հեղինակը նշում է, որ Սոնկուր ալ-Աշկարը ետ տրվեց սուլթան Բեյբարսին, ինչպես նաև Դարպասակի ամրոցը և մյուս բերդերը, բացի Բեհեսնիից, որը մեծ դժվարությամբ հայերը կարողացան պահել իրենց հովանավորության ներքո¹³: Իր հերթին սուլթանն էլ ազատեց Սսի տեր Յեթումի որդի Լևոնին և ուղարկեց Կիլիկիա¹⁴: Փաստորեն, Աբուլ Ֆիդայի մոտ նույնպես հաղորդումները շատ չեն և գրեթե չեն տարբերվում Յեթում պատմիչի և մանր ժամանակագիրների տեղեկություններից: Բացի Աբուլ-Ֆիդայից, հայ-մամլուքյան հարաբերություններին և մասնավորապես, Անտիոք քաղաքում կնքված հայ-մամլուքյան պայմանագրին անդրադարձել են ևս երկու արաբ հեղինակներ, որոնց հաղորդած վկայությունները չափազանց կարևոր են: Այսպես. պայմանագրի

¹¹ Յեթում պատմիչ, էջ 52:

¹² Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 74:

¹³ Արաբական աղբյուրները, էջ 237:

¹⁴ Նույն տեղում:

մասին վկայություններ ենք հանդիպում եգիպտոսի սուլթանի քարտուղար Իբն աբդ ալ-Չահիրի արաբերեն բնագրի մեջ¹⁵, որտեղ հեղինակը հետևյալ պայմանագրային դրույթներն է հաղորդում.« Կիլիկիայի հայկական թագավորությունն Եգիպտոսի սուլթանությանն էր հանձնում կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող մի շարք բերդերը՝ Դարպասակը, Բեհեսնին, Ռաբանը, Մարզաբանը, ինչպես նաև ստորակա դառնալու հավաստիացումներ: Բացի այդ, Ջեյհուն գետը համարվելու էր երկու պետությունների միջև ընկած ընդհանուր սահման և գերությունից ազատվելու էին և Սոնկուր ալ-Աշկարը և Լևոն արքայորդին¹⁶: Ինչպես նկատում ենք, ի տարբերություն նախորդ հեղինակների՝ Իբն աբդ ալ-Չահիրին ճշտությամբ հաղորդում է այն բոլոր ամրոցների անունները, որ հանձնվելու էր Եգիպտոսի սուլթանությանը: Ընդ որում, նա միակն է հայ և օտար պատմիչներից, որ հստակ նշում է, թե ինչպիսին պետք է լինի Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության միջև ընկած սահմանը: Թեև նրա մի շարք հաղորդումները բացառիկ կարևոր են մեր ուսումնասիրության համար, այնուամենայնիվ, այնտեղ առկա է կասկածելի մի հաղորդում: Խոսքը վերաբերում է հեղինակի այն տեղեկությանը, թե իբր հայկական թագավորությունը համաձայնվեց դառնալ Եգիպտոսի սուլթանությանը ստորակա: Խնդիրն այն է, որ հայկական թագավորությունը դժվար համաձայներ դառնալ ենթակա Եգիպտոսին, քանի որ վերջիններս Կիլիկյան Չայաստանի գլխավոր դաշնակից մոնղոլական պետության թշնամիներն էին: Ավելին, ապագա տասնամյակների պատմությունն էլ ցույց տվեց, որ նման բան չի եղել: Պարզապես Իբն աբդ ալ-Չահիրին, որը սուլթանի քարտուղարն էր, ցանկացել է գերազնահատել մամլուքների և սուլթան Բեյբարսի հաղթանակը: Վերջապես, ուսումնասիրվող խնդրի մասին խոսում է նաև Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչը՝ Մաքրիզին, որի աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն Եգիպտոսի սուլթանության և Կիլիկյան Չայաստանի, այլև խաչակիրների, մոնղոլների և Մերձավոր Արևելքի պատմության ուսումնասիրման համար: Խոսելով Կիլիկյան Չայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագրի մասին՝ հեղինակը նշում է, որ արքան վերադարձնելու էր Բեհեսնին ու Դարպասակը և բոլոր այն ամրոցները, որոնք գրավվել էին 1259-1260թթ. հայ-մոնղոլական զորքերի կողմից սիրիական արշավանքների ժամանակ¹⁷: Ընդ որում, ամրոցները պետք է վերադարձվեին այն վիճակում, ինչպես որ եղել էին նախկինում, այսինքն՝ հարստություններով հանդերձ: Չայերն էլ իրենց հերթին ազատելու էին Սոնկուր ալ-

¹⁵ Իբն աբդ ալ- Չահիր, Սուլթան Բեյբարս, Թարգմանված արաբերեն լեզվից, Ալ-Ռիյադ, 1976, էջ 327-337:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Մաքրիզի, Մամլուք սուլթանների պատմություն, հ. Ա, Կահիրե, 1958, թարգմանված արաբերեն լեզվից, նույնը ֆրանսերենով՝ Makrizi, Histoire des Sultans Mamelouks, Paris, 1837, T I, Part II, p. 54 :

Աշկարհն, իսկ Սուլթան Բեյբարսը՝ Լևոնին և մյուս գերիներին¹⁸: Որոշվեց նաև, որ սկզբում հետ էին վերադարձվելու ամրոցները, այնուհետև ազատվելու էր Լևոնը և հետո՝ Սոնկուր ալ-Աշկարը¹⁹: Ի վերջո, Չեթուն արքան երդվեց պայմանագրի վրա²⁰: Ինչպես նկատում ենք, հայ և օտարազգի պատմիչներից պայմանագրի մասին ամենաընդարձակը խոսում է Մաքրիզին: Մասնավորապես առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի այն վկայությունը, որ վերադարձվելիք ամրոցները պետք է տրվեին նախկին վիճակով, ներառյալ հարստությունները: Եվ այս դրույթը շատ տրամաբանական է : Հատուկ ուշադրության է արժանի Մաքրիզիի բերած այն տեղեկությունը, թե ինչպիսի հաջորդականությամբ պետք է կատարվեր գերիների փոխանակությունը: Այս տեղեկությունը կարևորվում է նրանով, որ հայկական և օտար սկզբնաղբյուրների մեջ այն միակն է, որ հստակ արձանագրել է, թե ինչ վիճակում պետք է վերադարձվեին սահմանային ամրոցները և ինչպիսի հաջորդականությամբ: Այժմ տեսնենք, թե ինչ են այդ մասին խոսում ժամանակակից գիտնականները: Այսպես, մի շարք այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Ա.Սուքիասյանը,²¹ Ա.Գալստյանը²², Թ. Բոեյզը²³ և Ջ.Պտուկյանը,²⁴ խոսում են 1266թ. մամլուքյան զորքերի կողմից դեպի Կիլիկյան Հայաստան արշավանքի մասին, սակայն որևէ կարծիք չեն արտահայտում հաշտության պայմանագրի մասին: Կարծում ենք, որ հեղինակների կողմից պայմանագրին չանդրադառնալը կապված է այն հանգամանքով, որ նրանցից ամեն մեկը փորձել է հետազոտել իրենց հետաքրքրող թեման, այլ ոչ թե հայ-մամլուքյան հարաբերությունները ու պայմանագիրը խորությամբ: Հայ-մամլուքյան պատերազմի մասին տեսակետ է հայտնում նաև Ժ. Մորգանը՝ նշելով միայն, որ կնքվեց հաշտության պայմանագիր հայերի համար շատ ծանր գնով²⁵: Թե որն էր այդ ծանր գինը, ինչպիսի կորուստներ էր ունենալու հայոց թագավորությունը պայմանագրի կնքումից հետո, հեղինակը այդ մասին չի խոսում: Հետազոտվող խնդրին են անդրադարձել նաև անվանի գիտնականներ Ս.Բոռնազյանը, Լ.Պուլը, որոնք նշում են, որ բացի Սոնկուր ալ-Աշկարի և Լևոնի փախանակությունից, հայերը Եգիպտոսի սուլթանությանը զիջեցին Դարպասակը և մյուս բերդերը, բացի Բեհեսնիից²⁶: Ինչպես

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ Ա.Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 77:

²² Ա.Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, էջ 36-37:

²³ T.Boase, The Cilician kingdom of Armenia, London, 1978, p. 26:

²⁴ Ջ.Պտուկյան, Կիլիկյան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 12-13:

²⁵ Jacques de Morgan, The history of the armenian people, Fram the remotest times to the Present day, Boston, 1965, p. 237.

²⁶ Ս.Բոռնազյան, Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Երևան, 1976, էջ 714, S. Lane-poole, A history of Egypt in the Middle ages, London, 1901, էջ 267:

նկատում ենք, այս հեղինակների արտահայտած կարծիքները թերի են, քանի որ ոչ միայն չեն նշում, թե որոնք են մյուս բերդերը, որոնք զիջվել էին Եգիպտոսի սուլթանությանը, այլև՝ ուրիշ նոր խոսք չեն նշում պայմանագրի բովանդակային դրույթներից: Չետաքրքիր է նաև մամլուքների պատմության ճանաչված հետազոտող Ս.Խոտկոյի կարծիքը, ըստ որի՝ այդ պայմանագրով Կիլիկյան Չայաստանը դարձավ մամլուքյան պետության վասալը²⁷: Կարծում ենք՝ հետազոտողը մի փոքր չափազանցել է պայմանագիրը և մամլուքների հաղթանակը, քանի որ հայկական թագավորությունը մնան քայլ չէր կարող անել: Չի բացառվում, որ վերջինս օգտվել է Իբն արդ ալ-Չահիրի բերած վկայությունից՝ չկատարելով խորը վերլուծություն: Ապագա տասնամյակների պատմությունը և հայ-մոնղոլական դաշնակցությունը նույնպես ապացուցում է մեր կարծիքը: Չայոց թագավորության տարածքային կորուստների մասին ավելի մանրամասնորեն խոսում են ճանաչված գիտնականներ Մ.Կանարը²⁸, Գ.Միքայելյանը²⁹, Ռ.Գրուսեն³⁰ և Դ.Օհսոնը³¹: Չետազոտողները նշում են, որ թշնամուն զիջվեց Դարպասկը, Մարզաբանը, Ռաբանը, Շի էլ-Չադիդը և այլ տարածքներ: Գիշտ է, այս աշխատություններում հստակ տրվում են զիջված տարածքները, սակայն որևէ այլ խոսք պայմանագրի մասին չեն փոխանցում: Նշված խնդրի մասին տեղեկություններ է տրամադրում նաև Մ. Սեթթոնը³² և Կ.Մուրաֆյանը³³, որոնք նշում են, որ հայերը ստիպված էին թշնամուն հանձնել պահանջվող բերդերը, որի արդյունքում՝ Լևոնը ազատվեց գերությունից և Կիլիկյան Չայաստանը զրկվեց Ամանոսի և Սիրիայի սահմանում նվաճած բոլոր տարածքներից: Փաստորեն, Մ.Սեթթոնը և Կ. Մուրաֆյանը նորովի ոչինչ չեն ասում և գրեթե կրկնում են իրենց նախորդների տեսակետները: Վերջապես նշված խնդրին անդրադարձել է նաև Մ.Օրմանյանը, ըստ որի՝ բացի զիջված բերդերից հայերը խոստացան խզել նաև իրենց կապերը և դաշնակցությունն արևմուտքի հետ: Կարծում ենք, որ հեղինակի առաջ քաշած տեսակետը բավականին հետաքրքիր է և կարող է ճշմարիտ լինել: Երբ Եգիպտոսի սուլթանության զորքերը 1275թ. արշավեցին դեպի Կիլիկիա, ապա արշավանքի պատճառ էին համարում այն, որ հայերը խախտել են 1268թ. պայմանագիրը՝ մատնանշելով այն հանգամանքը, որ կրկին դիմել են Եվրոպական երկրներին՝ խաչակրաց արշավանք սկսելու նպատակով: Բացի այդ, Կիլիկյան Չայաստանի պատմության գրեթե ողջ ժամանակաշրջանում, հայ-մամլուքյան

²⁷ С. Хомко, Черкесские Адыгские правители Египта и Сирии в 13-18 веках, Маύкон, 1995, см. 173-174:

²⁸ M. Canard, նշվ. աշխ., p. 236:

²⁹ Գ.Միքայելյան, նշվ. աշխ., էջ 207:

³⁰ R.. Grousset, Histoire des Croisades, et du Royaume franc de Jerusalem, Vol.I, Paris, 1934, էջ 636:

³¹ D. Ohsson, Histoire des Mongols, T.III, Amsterdam, 1852, էջ 424:

³² A history of the Crusades, Vol. II, General edition M. Setton, London, 1969, էջ 654:

³³ Կ. Մուրաֆյան, նշվ. աշխ., էջ 437:

հարաբերությունների ժամանակ միշտ էլ հայերին զգուշացնում էին, որպեսզի վերջիններս զերծ մնան դեպի արևմուտք դաշնակցությունից և չհրահրեն նոր խաչակրաց արշավանք: Շատ հավանական է, որ պայմանագրի այս կարևոր դրույթը պարզապես դուրս է մնացել պատմիչների ուշադրությունից:

Այսպիսով, միջնադարյան աղբյուրների ընձեռած վկայությունները և մասնագիտական գրականության քննությունը թույլ է տալիս մեզ ներկայացնել Անտիոք քաղաքում Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև կնքված պայմանագիրը.

1. Կիլիկյան Հայաստանը Եգիպտոսի սուլթանությանն էր հանձնում սահմանային մի շարք կարևոր բերդեր՝ Դարպասկը, Ռաբանը, Մարզաբանը, Շի էլ-Հադիդը:

2. Վերոնշյալ տարածքները պետք է վերադարձվեին այն վիճակում, ինչպիսին եղել էին մինչ նրանց գրավումը, այսինքն՝ հարստություններով հանդերձ:

3. Հայերը պետք է ազատ արձակեին մոնղոլական գերության մեջ գտնվող Սոնկուր ալ-Աշկարին:

4. Սուլթան Բեյբարսը պետք է ազատ արձակեր Լևոն արքայորդուն և Մառիի ճակատամարտում գերի ընկած մյուս հայ գերիներին:

5. Ջայհան գետը համարվելու էր երկու պետությունների միջև ընկած ընդհանուր սահման:

6. Նախ հետ էին վերադարձվելու նշյալ տարածքները Եգիպտացիներին, որից հետո սուլթան Բեյբարսը ազատ էր արձակելու Լևոնին և մյուս գերիներին, և վերջում ազատ էր արձակվելու Սոնկուր ալ-Աշկարը:

7. Կիլիկյան Հայաստանի ղեկավարությունը պարտավորվեց խզել իր կապերը արևմուտքի հետ և չդիմել խաչակրաց արշավանք սկսելու խնդրանքով:

8. Երկու պետությունների միջև հաստատվում էր խաղաղություն և բարեկամական հարաբերություններ:

Ահա սրանք են հայ-մամլուքյան հաշտության պայմանագրի բովանդակության հիմնական դրույթները: Պայմանագրի բովանդակության դրույթների մասին քննությունը ավարտելուց հետո կցանկանայինք որոշակի անդրադարձ կատարել նաև պայմանագրի կնքման թվականի շուրջ: Հայտնի է, որ հետազոտողների ճնշող մեծամասնությունը նշյալ պայմանագիրը թվագրում է 1268 թվականով, սակայն Ս.Խոտկոն³⁴ և Դ. Օհսոնը³⁵ այն նշում են 1267 թվականով: Խնդրի պարզաբանման համար առաջին հերթին պետք է ճշտել մամլուքյան զորքերի արշավանքի հստակ

³⁴ C. Xomko, նշվ. աշխ., էջ 173-174:

³⁵ D. Ohsson, նշվ. աշխ., էջ 424:

տարեթիվը: Ապացուցված փաստ է, որ այն տեղի է ունեցել 1266թ. օգոստոսին, որին էլ վկայում են ինչպես հայ, այնպես էլ օտար պատմիչները³⁶: Եթե հայտնի է, թե երբ է դեպի Կիլիկիայի հայկական թագավորություն տեղի ունեցել մամլուքյան արշավանքը, ապա մնում է պարզել նաև, թե ինչքան ժամանակ են գերության մեջ մնացել Լևոն արքայորդին և մյուսները: Այս առնչությամբ կարևոր հաղորդում ենք հանդիպում Վահրամ Ռաբունու աշխատության մեջ, որտեղ հեղինակը նշում է, որ Լևոն արքայորդին Եգիպտոսում գերության մեջ մնացել է մեկ տարի և տաս ամիս.

« Եւ Եգիպտոս՝ յառաջացեալ
Եւ անդանօր՝ ի բանտ ածեալ...
Ամի մի և տասն ամիս կացեալ,
Իյ Եգիպտոս՝ պանդխտացեալ:
Ապա երդմամբ՝ դաշինս եղեալ,
Ընդ Լեոնի՝ որ անդ եղեալ.
Նովաւ ի հայր՝ նորին յղեալ,
Եւ զհաշտութիւն՝ ընդ կատարեալ:
Իսկոյն զնա՝ պատուով հանեալ,
Մեծաւ փառօք և արծակեալ »³⁷ :

Եթե Եգիպտոսի սուլթանության արշավանքը դեպի Կիլիկիայի հայկական թագավորություն տեղի է ունեցել 1266թ. օգոստոսին, ապա այդ թվին գումարելով մեկ տարի և 10 ամիս ժամանակը, ստանում ենք 1268 թվականի հունիս ամիսը:

Այսպիսով, պետք է նշել, որ Կիլիկյան Յայաստանի և Եգիպտոսի սուլթանության միջև Անտիոք քաղաքում կնքված հաշտության պայմանագիրը կնքվել է 1268 թվականին:\

³⁶ Վարդան Արևելցի, էջ 169, Չեթում պատմիչ, էջ 51-52, Վահրամ Ռաբունի էջ 225-226 , Իբն արդ ալ - Ջահիր, էջ 327-337, Մխիթար Այրիվանեցի, էջ 68, Արաբական աղբյուրները, էջ 272, Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժգ դարի, էջ 341-343, Bar Habraeus, p. 445-446:

³⁷ Վահրամ Ռաբունի, էջ 225-226:

Summary

The article focuses on the history of the relationship between the Kingdom of Cilician Armenia and the Egyptian Sultanate referring particularly to the war between the Armenians and the Mamluks in the late 60-ies of the XIII century as well as the peace negotiations and agreement between them.

The article also focuses on the content-issues of the peace agreement between the Armenians and the Mamluks signed in Antioch in 1268. It is stated and proved that the agreement was signed in 1268 and not in 1267 as stated earlier. It is worth mentioning the interpretation of certain issues of the agreement that have been carried out on the bases of both medieval Armenian and foreign sources. The information on the loss of the territories of the Armenian Kingdom and the formation of the new boundaries of the Cilician Armenia is particularly of great importance.

Լրաբեր հասարակական գիտությունների